

ԱԲՐԱՀԱՄ ՏԵՐԵԱՆ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԸ ԵՐՈՒՍԱՂԵՍՈՒՄ

Նախքան 19-րդ դարի երկրորդ կյահ հայ-թռքական խողովութիւնները, հայութեան գրեթե երեք քառորդը Օսմանեան հպատակներ էին: Բոլոր ոչ-մահմեդական հպատակներից, մանաւանդ յոյներից եւ մակերնացիններից աւելի, Բարձրագոյն Դուռը Հայերին համարում էր անհնահաւատորին հպատակները: Արդարեւ, Երուսաղէմի հայերը են մեծ նպաստ են ստացել Օսմանեան իշխանաւորների հայերի հանդէպ ոնեցած այդ երկարատև բարեացականութիւնից, մասնաւորաբար, երբ հարցը վերաբերուել է Սուլը Երկրի սրբաւելեաց վեճերին:

Բաւական մեծ թուվ տեղացի հայեր կարեւոր պաշտօններ են պրադեցրել Երուսաղէմի կառավարչութիւնուն: Հայերը այնքան յայտնի էին Թուրքերի հետ ոնեցած իրենց լաւ յարաբերութիւններով, որ մի քանի տեղացի հայեր նոյնիսկ երոպական տէրովութիւնների դեսպաններ են նշանակուել ոչ միայն Երուսաղէմում եւ Եաֆայում, այլ նաև Բէյրութում եւ Թրիֆոլիում:

Պաղեստինի եւ Լիբանանի հայկական փոքրաթիւ համայնքները պատուել են թռքական տէղահաննան եւ կոտրածի քաղաքականութիւնից այն պարզ պատճառով, որ նրանք չեն պրադեցրու յեղափոխական գործունէութեամբ: Բէյրութի տէղական կառավարութեան հայ պաշտօննեանները, ովքեր կասկածուում էին յեղափոխական գործունէութեան մէջ, 1915-ին աքսորուեցին եւ մահապատճի ենթակրուեցին Դամակոսուն: Սուլը Նշանի վանքը եւ յարակից տարածքները ոչչացուեցին եւ վերածուեցին աւերակի, իսկ հայ առեւտրականները վրկուեցին իրենց ոնեցու ածքից:

Նախքան Յեղասպանութեան հապարաւոր վերապրոդների Երուսաղէմ հասնելու մասին խօսես, ուզում եմ հակիրճ կերպով խօսել Օսմանեան իշխանութեան կողմից 1890-ին Երուսաղէմ աքսորուած նշանաւոր մի հայի մասին: Այդ հայը Խառամբուլի գործունէայ Պատրիարք Սկրտիչ Խրիմեանն է, ով աւելի յայտնի է իր ժողովրդական Հայրիկ անուամբ, ով հետագայում ընտրուեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս (1893-1907): Ին 1869-ին նա մատունաշում էր քաղաքական եւ հասարակական քարեփոխումների պահանջը՝ մեղմելու համար հայութեան դժգոհութիւնն ու բողոքը, որոնք վերաբերում էին Օսմանեան տէրովութեան նահանգներում ապրող հայերի պայմաններին: Բարեփոխումների այդ պահանջը յետոյ ստացաւ «Հայկական Հարց» անուանումը: Սա պատճառ հանդիսացաւ, որ Սուլթան Աբդուլ Համիդ II-ը աքսորուեց Խրիմեան Հայրիկին:

Խրիմեան Հայրիկը, երբ դեռ աշխարհական անձ էր, 1850-ին ուխտի է գալիս Երուսաղէմ: Այդ ժամանակ նա 30 տարեկան էր եւ եկել էր կատարելու իր երդումը իր առաջին գրքի՝ (Հրահրակ Արարատեան) հրատարակումից յետոյ: Երուսաղէմ գտնուած ժամանակ Երուսաղէմի Յովիաններ Պատրիարքը նրան քաջալերում է, որ նանաօրինակ մի հրաւեր է ուղիղ հայ ուխտաւորներին, հրաւերելով նրանց ուխտի զալ Սուլը Երկիր: Դրանից առաջնորդուած նա գրեց իր Հրահրակ Երկրին Աւելուաց գորոյկը՝ պատմելով նոյն ոճով Քրիստոսի կեանքին կապուած տարբեր սրբավայրերի մասին: Այն հրատարակուել է Խառամբուլում 1851-ին: Աւելին, Երուսաղէմի իր փորձառութիւնները ներշնչան աղքանը են եկել իր հետագայ կեանքի և գործունէութեան համար: 1853-ին Վան վերադառնալով նա տէղեւկանում է գործունէութեան համար: 1853-ին Վան վերադառնալով նա տէղեւկանում է գործունէութեան համար: 1853-ին Վան վերադառնալով նա որոշում է ձեռնադրուել իր մօր եւ կոչ մահուան մասին, որից յետոյ նա որոշում է ձեռնադրուել

կուսակրօն քահանայ 1854-ին Աղթամարում: 1866-ին նա երկրորդ ամգամ է ուխտի զալիս Երուսաղեմ՝ առաջնորդելով ուխտադրությունը մի փորբիկ խումբ եւ օգուազորդելով իր գրողիկը իբրեւ ներշնչող առաջնորդ:

1890-ին եղբ Խրիմեան Հայրիկը իր ծաւալած քաղաքական գործունեայ աշխատամքի համար հեռացուում է իր Պատրիհարքական պաշտօնից եւ արտուրում Երուսաղեմ, նա այդ արտորը համարում է իր երրորդ ուխտագնացութիւնը: Յաջորդ երկու տարիների ընթացքում Երուսաղեմում նա գրում է իր ամենամեծ աշխատութիւնը՝ Պապիկ եւ Թոռնիկ գիրքը: Գրում նա խրախուսում է կապը հողի հետ եւ յոյս յայտնում, որ գիրքը կարող է արգիլել հայ գիւղացուն իր պատմական հողը լրելոց եւ Խառամբուլում բանսորսական աշխատանք կատարելոց: Նա նաև վերամշակում է իր Հրահիրակ Երկրին Աւետեաց գրողիկը եւ վերահրատարակում Երուսաղեմում 1892-ին՝ նախարանում աւելացնելով հետեւեալ յաւելու ածը.

Ին սիրելի հայ վաւակներ:

Աւելի քան քառասուն տարի առաջ ես ձեզ հրաւերք ուղղեցի: Տէրը, ով Կեանքի Աղբիւն է եւ Կեանք Պարգևողը, ինձ ողջ պահեց, որպէսի այժմ, քառասուն տարի յետոյ, մեկ ամսամ ես ձեզ հրաւիրեալ Սուրբ Երկիր: Թող որ իմ ուժը վերամտրողուի ինչպէս երիտասարդ արծիւ, որպէսի ես շարունակեալ ձեզ հրաւիրել: Սիոնի բարձրունքից կրկին ձեզ եմ ուղարկում Հրահիրակ Երկրին Աւետեաց-ը:

1893-ին, իր Երուսաղեմ գոնուած ժամանակ, Խրիմեան Հայրիկը ընտրուում է Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Երուսաղեմից ճանապարհորդում է Եջմիածին:

Հարուատ հայերը շարունակում էին այցելել Երուսաղեմ, իսկ նրանցից ունանք ամուսնանում էին տեղացի հայերի հետ եւ մասն Երուսաղեմում:

Եղբ Կիլիկիայի կոստրածը սկսուեց 1909-ին, Հալէա քաղաքը հայ գաղթականների համար վերածուեց ապահով մի ապատարանի: 1915-ին, եղբ Ցեղասպանութիւնը հասաւ իր բարձրակետին, Անսառողիայի եւ Կիլիկիայի բարձրաթիւ հայեր կոստրուեցին, իսկ շատերին (իինականում ծերեր, կանաքը եւ երեխաններ) ստիպեցին քարաւաններով քայլել դէպի Հալէայի, Հանայի եւ Հոմսի շրջաններ, իսկ աւելի դժբախները նոյնիսկ հասան մինչեւ Դէյր էլ-Չորի Սիրիական անապատ, որտեղ հապարառը գաղթականներ մահացան սովոր կամ սպանուեցին: Սիրիական քաղաքներում իրավիճակը աւելի վաստարացաւ, եղբ հիւմսացին Սիրիայում գոնուող Անտիոքի հայերը տեղահանուեցին դէպի Համա, իսկ Լաթակիայի եւ որիշ ծովախնեայ քաղաքների հայերը ուղարկուեցին Հալէա: Նրանք, ովքեր հասան Պաղեստին, ըստ էութեան, առաջին քարաւանների վերապրողներն էին, որ հասել էին սիրիական գաղթականների քաղաքներ: Նշենք, որ աւելի բախտաւոր էին Կիլիկիայի այն վերապրողները, ովքեր պատուել էին նաւերով, օրինակ Մուսա Դայի 6000 վերապրողները, ովքեր նախ ֆրանսական նաւերով տարուեցին Պորտ Սայիդ նաւահանգիստը, իսկ ապա տեղաւորուեցին Կահիրէ եւ Ալեքսանդրիա:

Հայերը Առաջին Համաշխարհային պատերազմի աւարտին նաև փոքր մասշտաբով նպաստեցին Դաշնակից պետութիւններին Թոքքերի դէմ ուղուած վինուորական արշաւանքներում: Մօտ 8000 հայ երիտասարդներ, ներառեալ Մուսա Դայի վրապրողներ, նոյնիսկ Սիրական Սահանգներից եւ տարբեր տեղերից եկած կամաւորներ, կավեցին «Հայկական Լեզեռն» որը աչքի ընկաւ Պաղեստինի ուազի դաշտում Քրիտանական

իրանանատարութեան ներքոյ, իսկ ուրիշ մի ջոկատ աչքի ընկալ Սիրեայի հիւսիս-արեւմուտքում՝ ֆրանսիական իրանանատարութեան ներքոյ: Երուսաղեմի հայերը հպատու են այն կանառների համար, ովքեր կորեցին և քաջաբար ընկան Նաբլու քաղաքից հիւսիս ընկած Արարայի մարտուն: Ճիշտ Սիրնի Դարպասից դուրս, Դաւթի աւանդական գերեկնան տանող ներ ձանապարհի երկայնքով գոնուում է հայկական Սուրբ Փրկչի Վանքը: Այս վանքում են գոնուում Պատրիարքական եւ Ազգային գերեկնանատները: Վերջինուում է գոնուում նաեւ Արարայի փոհերի յիշառակը յաւերժացնող մի յոշակութող:

Հայ կանառները, ովքեր կորու էին դաշնակից պետութիւնների կողքին, ոչ միայն մղուած էին իրենց դէմ կառարուած դաժանութիւնների վուէժը առնելոց, այլ նաեւ նրանց տուած խոստումից, մասնաւորաբար Ֆրանսիայի տուած խոստումից: Նրանք խոստացել էին Կիլիկիայում հիմնել անկախ Հայաստան: Տասնեակ հապարաւոր հայեր, հիւսիսային Սիրիայում տարած ֆրանսական սկզբնական յաղթանակներից քաջալերուած վերադարձան հարաւային Կիլիկիայի իրենց բնակավայրերը: Սակայն 1921-ին նրանք կրկին լրեցին Կիլիկիան, երբ Ֆրանսիան դաւաճանեց իր դաշնակից հայերին, կմրելով դաշնագիր Շէնալ Աթաթուրքի հետ եւ թողեց հայերին թուրքերի գթութեամբ: Մօտ 20,000 հայեր կոտրուեցին Մարաշում եւ 10,000 հայեր էլ Հաճնուա: Այսպիսով սկիզբ առաւ հայ գաղթականութեան երկրորդ ալիք, ովքեր ողբուեցին դէպի հարաւային Սիրիա, սակայն այսուող քաղաքների գերծանրաբեռնուած լինելու պատճառով եւ ֆրանսիական քաջալերութեամբ, գաղյա սկսուեց դէպի Լիբանան եւ Պաղեստին:

Այսպիսով, Երուսաղեմը դառնուում է ցանքային վերջին կայանը Անառողիայից եւ Կիլիկիայից տեղահանուած եւ նաեւ պարզապէս թշնամոց փափսած հապարաւոր գաղթականների համար: Նրանցից ոմանք հաստատում են Հայֆա եւ Եաֆա քաղաքներու, որուեղ 1915-ից առաջ արդէն հայկական փոքրաթիւ համարներ կային: Պաղեստին հասած Ցեղասպանութեան հայ թաղթականների թիւը այդ ժամանակ թերեւս գերազանցել էր 10,000-ը, ովքեր ներկայացնում էին Հայաստանի պազարնակչութեան գրեթէ բոլոր հասուածները, սկսած Երկրումի արեւելքից մինչեւ Կիլիկիա, սակայն յատկապէս Մարաշից, Հաճնից, Այնթափից եւ Աղասայից: Այնքան շատ Մարաշի վերապրողներ կային, որ նրանք Երուսաղեմում նոյնիսկ հիմնեցին իրենց բացառիկ ակումբը, Դաւթի Միջնաբերդի մօտ՝ ուսուհանատառ դիմացը (ներկայիս "Select Restaurant"):

Ցեղասպանութեան վերապրողները խանդավառութեամբ չընդունուեցին բնիկ հայերի կողմից, ովքեր վարժուած էին տեսնել միայն հարուստ հայերի. մասնաւորաբար Խառամբուլի հայերը, ովքեր ի վիճակի էին ուխտի գաղ Սուրբ Երկիր: Երականում, բնիկ հայերի մեծ մասը այդ ուխտաւորների ժառանգներն էին, ովքեր ուխտի գաղուց յետոյ մնացել էին Երուսաղեմ: Թուով թիւ ընտանիքներ են միայն հաստատում, որ նրանք Խաչակիրների ժամանակուայ հայերի ժառանգներն են: Բնիկ հայերից շատերը նոյնիսկ մերժել են իրենց դուստրերին կութեան տալ հայ գաղթական երիտասարդ վերապրողներին: (Ին պատիկը նախընտել է տեսնել իր երեք գեղեցիկ աղջիկներին չանուսնացած, քան թէ գաղթական վերապրողների հետ անուսնացած, որոնց պայմանները, ընդիանուր առանմբ, բնիկների համեմատ աւելի վատ էին: Թշնամանքը արտապայտելու միջոց էր իրար ծաղրելը: Բնիկ հայերը հայերէն վատ էին խօսուում, այն էլ արաբերէնի առոգանութեամբ, մինչդեռ նորեկ հայերը խօսում էին վատ հայերէն թթրական առոգանութեամբ: Շատերը ընդիանարապէս հայերէն չեն իմացել:

Հայ Հայերէն խօսելը հպարտամալու առիթ էր, ուստի լեզուն սովորելը բացալերամբ առացաւ:

Այն ինչը փրկեց Երուսաղէմի Հայերի վիճակը, դա այդ ժամանակուայ Պատրիարքների ղեկավարութիւնն էր, մասնաւորաբար, Եղիշէ Դորեան Պատրիարքի ղեկավարութիւնը, ով յիշում է իրեւ մեծ եկեղեցական, պատմաբան, մոռաորական եւ դաստիարակ: Խոտամբուլի Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի հետ նա պաշտպանել է Հայ Եկեղեցու կրթուած եւ բարձրագիտուակ հոգեւորականներ ունենալու գործը եւ օգնել է նրան, որ հիմնադրուի Խոտամբուլից ոչ հեռու՝ Արմաշի Աստուածաբանական Ճեմարանը: Այս Ճեմարանում են կրթուել անցած սերունդի շատ ակնառու եկեղեցականներ: Երբ Ցեղասպանութեան ժամանակ Արմաշի Ճեմարանը փակուեց եւ հոգեւորականները հավածուեցին, Դորեանը մի քանի ուրիշ հոգեւորականների հետ ապաստանեցին Երուսաղէմուն: Առաջին Համաշխարհային Պատերազմից յատոյ Դորեան Արքեպիսկոպոսը ընտրուում է Երուսաղէմի Պատրիարք եւ դատուում է կրթական եւ մոռաոր վերածնունդի վերակմասաւորող ոգին ոչ միայն վանքի այլև համայնքի համար: Իր պաշտօնավարութեան տարիներին կառուցուել են տեղական դարոցը եւ գրադարանը (1929, վահաճանած 1931-ին): Իր երկու յաջորդները նոյնպէս Արմաշի սամերից էին, Թորգոն Պատրիարք Գոշակեանը եւ Մեսրոպ Պատրիարք Նշանեանը, ովքեր նոյնպէս եղել են շնորհալի առաջնորդներ եւ անդամակցել էին Երուսաղէմի Սիաբանութեանը: Նրանց թուում էր նաև Բարկէն Արքեպիսկոպոս Կիլետերեանը, Անթիլիասի Կիլիկեան Կաթողիկոսութեան Աթոռակից Կաթողիկոսը:

Երուսաղէմ էին հասնում անհանար որբերի խմբեր նաև հեռաոր Վանից, որն էլ անհրաժեշտութիւն առաջացրեց Արարատ Ողբանցի հիմնադրունը: Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանը ըստ աւանդութեան իր սամերին հաւաքարում է հայկական միսս զաղացածախներից եւ ոչ Պաղեստինից, ովքեր այնուհետեւ իրենց ընդհանուր եւ հոգեւոր կրթութիւնը ստանում են Սուրբ Յակոբուն Որբերից շատերը պատրաստի թեկմածուներ էին ժառանգաւորաց Վարժարանի համար: Նրանցից ոմանք կուսակրօն քահանայ ձեռնադրուեցին: Սա իր հերթին մի մեծ օրինութիւն էր Հայաստանեաց Եկեղեցու համար, քանի որ այդ նոյն ժամանակ Հայաստանը անդամակցեց Սովետական Սիրթեան երկրներին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կողցրեց իր ապդեցութիւնը Սփինորի հայերի վրայ: Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Սիաբանութիւնը պահպանեց Հայաստանեաց Եկեղեցին Սփինորուն: Իրականում, Երուսաղէմի Պատրիարքութիւնը շատ է նպաստել Կիլիկիայի Կաթողիկոսութեան վերածնունդին Լիքանանում. Անթիլիասի իր նոր պատաստանում: Պատրիարքարանը Անթիլիասին վիցեց ոչ միայն իր եկեղեցական իրաւասութիւնը Սիրիայուն, Լիքանանում եւ Կիպրոսում, այլև Երուսաղէմի մի քանի հոգեւորականներ երկար տարիներ դասաւանդեցին Անթիլիասի նորաբաց Ճեմարանուն:

Այսպիսով, երբ Կիլիկիայում Եկեղեցու բոլոր վանական եւ կրթական հաստատութիւնները ոչնչացուեցին եւ արգելուեց դրանց բարգաւաճունը Հայաստանում, Երուսաղէմը, որը պատուել էր այդ աղէտից, դարձաւ մի փրկարար գործոն Հայ Եկեղեցու կեանքուն: Երուսաղէմուն, պատերազմական տարիներից յատոյ, Եկեղեցականների մի նոր սերունդ է կրթուում եւ առարուում Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Հիւսիսային Ամերիկա, իսկ հետագայուն նաև Հարաւային Ամերիկա եւ Աւստրալիա:

Սի ժամանակ, միայն վանքի տարածում Ցեղասպանութեան աւելի քան 5000 վերապրողներ են եղել: Սա, անկասկած, իր ապդեցութիւնն է թողել տեղի վանական բնոյթի վրայ: Երկու «ակումբներ» են հիմնուել

վանքում, որոնք պատկանում են հայ քաղաքական երկու կուսակցութիւններին, որպէսզի պատկվեն յարատել աճող համայնքի հասարակական և մշակութային կարիքները: Սա նաև դրդել է բնիկ հայերին, որպէսզի նրանք եւս հիմնեն իրենց «ակումբը» Հայկական Թաղամասում, որի նպատակն էր նաև նպատել կարիքաւոր ընտանիքներին: Ըուսով հայ գաղթականները դառնում են քաղաքի համբաւաւոր արհեստաւորները, ովքեր նոյնիսկ որոշ առեւտրի տեսակներում վայելում են մոնոփոյիա: Նոր սերոնող կրթում է տէղական դպրոցներում և ցանկալի պաշտօնեաներ են դառնում Բրիտանական Մանդատի իշխանութեան ընթացքում: Անզերէնի և ֆրանսէրէնի նրանց խմացութիւնը նրանց առջեւ ճանապարհ է քացում դէպի արեւելեան երկրներ և արագացնում շատերի մեկնումը Երուսաղէմից: Միաները քաղաքից մեկնում են 1946-ին, երբ երկրորդ Համաշխարհային պատերազմից յետոյ, Խորհրդային իշխանութեան արտօնութեամբ Սիցերկրական քաղաքներից հավաքաւոր հայեր ներգաղթեցին Հայաստան: Իսկ նրանք, ովքեր լրեցին քաղաքը 1948-ի Խորայէլի պետութեան հիմնադրումից յետոյ, արդէն ժամանակակից պատմութիւն է:

Այո, Անաստիայի և Կիլիկիայի հայերը մեծ քավմութեամբ եկան Երուսաղէմ, և նրանցից շատեր լրեցին քաղաքը, սակայն ոչ այնպէս, ինչպէս Խրիմեան Հայրիկը կ'ուզէր տեսնել նրանց գալը և գնալը:

Անզերէնից թարգմանեց՝
Կողին Աբդ. Բաղդասարեան